ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 14.02.2017թ.

Ո Ր Ո Շ Ու Մ

ԳԲԽ-16/17 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-16/17 բողոքը քննող հանձնաժողովը, գործելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի 2017 թվականի փետրվարի 08-ի բողոքով ԳԲԽ-16/17 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրած միջնորդությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆոտոն» ՍՊԸ-ի 2017 թվականի փետրվարի 08-ի բողոքով ԳԲԽ-16/17 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրած՝ Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/56» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով ընթացակարգը 3-րդ չափաբաժնով կասեցնելու՝ որպես ժամանակավոր միջոց կիրառելու միջնորդությունը բավարարել:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ **Գևորգ Հայրապետյան**

անդամ՝ **Հրաչիկ Ավետիսյան**